

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԶՈՂՎԱԾ, ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԿԱՄ ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

22.01.2021 15:30



2021թ. հունվարի 21-ին 22 փաստաբանների պալատում տեղի է ունեցել մասնագիտական քննարկում Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տուժած անձանց մոտ առաջացած իրավական խնդիրների, լուծման հնարավոր ուղիների, դրանցում փաստաբանների և իրավապաշտպան գործունեությունն իրականացնող անձանց աջակցության հնարավորությունների վերաբերյալ:


Քննարկմանը մասնակցել են 22 փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, նախագահի տեղակալներ Մանե Կարապետյանը և Հարութ Ակլունցը, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանը, ՀՊԳ ղեկավարի տեղակալներ Լուսինե Սարգսյանը և Արմինե Ֆանյանը, ինչպես նաև փաստաբաններ Արա Ղազարյանը, Սիրանուշ Սահակյանը, Արա Խզմայանը և Լևոն Գևորգյանը:

Քննարկման արդյունքում ընդգծվել է մարտական գործողությունների մասնակիցների և պատերազմի արդյունքում տուժած անձանց՝ հետպատերազմյան շրջանում առողջական, սոցիալական, իրավական և այլ բնույթի խնդիրների արագ և հասցեական լուծման խիստ կարևորությունը:


Այդ առումով հատուկ անդրադարձ է կատարվել զոհված, անհայտ կորած կամ գերեվարված զինծառայողների ընտանիքների անդամների, վիրավորում ստացած զինծառայողների, մարտական գործողությունների մասնակիցների, մահացած կամ հաշմանդամություն ստացած քաղաքացիական անձանց և նրանց ընտանիքի անդամների, տեղահանված կամ գույքային վնաս կրած անձանց խնդիրներին:

Առանձնացված խնդիրների առնչությամբ քննարկվել է առկա վիճակը, և նախանշվել են հնարավոր լուծումները: Որպես առաջնային գործողություն՝ արձանագրվել է ըստ առանձին խմբերի ենթադրյալ հարցերի վերաբերյալ նշված անձանց համար ուղեցույց կազմելու և հրապարակելու անհրաժեշտությունը:


**Առաջարկվող նորություններ**




**30.09.2020** ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՈՒՆԵՑԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ



**08.10.2020** ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՉՈՎ



**09.10.2020** ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԻԱՑԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅԱՆԸ



**23.10.2020** ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ՊԱԼԱՏԸ ՈՐՈՇԵԼ Է  
CHEVROLET NIVA 212300-55  
ՄԱԿՆԻՇԻ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ  
ՆՎԻՐԱԲԵՐԵԼ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })